



Հաստատված է

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդի նիստի որոշմամբ առ 09.07.2010 թ.

Խորհրդի Նախագահ
Գագիկ Զաքարյան

Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն Պայմանների համաձայն «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) կնքում է մասնագիտական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրեր (այսուհետ՝ Ապահովագրության պայմանագրեր) իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, գործունակ ֆիզիկական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիր):

1.2. Սույն Պայմանների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով կարող են ապահովագրվել Ապահովադրի կամ նրա կողմից մատնանշված այլ անձի (այսուհետ՝ Պատասխանատու անձ) մասնագիտական պատասխանատվության ռիսկը, որն առաջանում է աշխատանքային պարտականություններն իրականացնելու ընթացքում մասնագիտական անփութության հետևանքով երրորդ անձանց հասցրած վնասների հետ կապված:

1.2.1. Իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ հետ կնքված Ապահովագրության պայմանագրով կարող են ապահովագրվել նրանց բոլոր կամ առանձին աշխատակիցները մասնագիտական պատասխանատվության ռիսկից՝ համաձայն Ապահովագրության պայմանագրին կցվող ցուցակի:

1.3. Ապահովադրի աշխատակիցն անձ է, որն Ապահովադրի հետ գտնվում է աշխատանքային կամ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ՝ համաձայն կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի:

1.4. Անձը, որի վնաս հասցնելու պատասխանատվությունն ապահովագրվել է (Պատասխանատու անձ), պետք է նշվի ապահովագրության պայմանագրում, իսկ եթե տվյալ անձը նշված չէ, համարվում է, որ ապահովագրվել է հենց Ապահովադրի պատասխանատվությունը:

1.5. Վնաս պատճառելու հետ կապված մասնագիտական պատասխանատվության պայմանագիրը համարվում է կնքված այլ անձանց (Շահառուների) օգտին, ում կարող է պատճառվել վնաս:

2. Ապահովագրության օբյեկտ

2.1. Ապահովագրության օբյեկտ է համարվում Ապահովադրի (Պատասխանատու անձի)՝ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք առաջանում են կապված Ապահովադրի (Պատասխանատու անձի) կողմից այլ անձանց (Շահառուների) առողջությանը, գույքին և/կամ դրամական միջոցներին (բացառությամբ դրամական միջոցներին հասցված ուղղակի ֆիզիկական վնասը)

հասցրած վնասի հատուցման պատասխանատվության հետ.

- 2.1.1. պատասխանատվություն այն պարտավորությունների համար, որոնք առաջացել են մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը, գույքին և դրամական միջոցներին հասցված վնասի արդյունքում,
- 2.1.2. ծախսեր, կապված դատական գործերի վարման հետ, որոնք առաջացել են մասնագիտական գործունեության ընթացքում հասցված վնասի հետևանքով:

3. Ապահովագրական պատահար

3.1. Սույն Պայմանների համաձայն ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր Ապահովադրի (Պատասխանատու անձի) կողմից Ապահովագրության պայմանագրում նշված մասնագիտական գործունեության հետևանքով, ինչպես նաև գործունակ ֆիզիկական անձ Ապահովադրի (Պատասխանատու անձի) մասնագիտական գործողությունների կամ մասնագիտական անգործության հետևանքով այլ անձանց վնաս հասցնելը, եթե անգամ վնաս հասցնելու հանգամանքն ի հայտ է եկել ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո, որը հանգեցրել է այլ անձանց կյանքին, գույքին, դրամական միջոցներին և/կամ առողջությանը հասցրած վնասի հետ կապված մասնագիտական պատասխանատվության առաջացման, ինչպես նաև դատարանում և արբիտրաժային մարմիններում գործերի վարման համար իրավաբանական օգնության համար կատարված փաստացի ծախսերի հետ:

3.2. Ապահովագրական հատուցումը ներառում է՝

- տուժածների կյանքին և առողջությանը հասցված վնասը՝ համաձայն ՀՀ օրենսդրության,
- վնասված գույքի շուկայական արժեքը,
- վերականգնողական ծախսերը, որոնք անհրաժեշտ են գույքն այն վիճակի բերելու համար, որում այն գտնվում էր մինչև ապահովագրական պատահարը,
- խախտված գույքային իրավունքի վերականգնման համար տուժածի կողմից արված ծախսերը:

3.3. Ցանկացած դեպքում հատուցման ենթակա չեն և չեն համարվում ապահովագրական պատահար այն վնասները, որոնք պատճառվել են Շահառուներին՝

- 3.3.1. Ապահովադրի (Պատասխանատու անձի) ակտիվ, թմրանյութերի կամ տոքսիկ ընդարմացման վիճակում գտնվելու արդյունքում,
- 3.3.2. Ապահովադրի (Պատասխանատու անձի) կողմից օրենքների, գերատեսչական և արտադրական կանոնների, կանոնակարգերի, նորմերի և նորմատիվ փաստաթղթերի խախտման արդյունքում,
- 3.3.3. Ապահովադրի (Պատասխանատու անձի) կողմից երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում,
- 3.3.4. Ապահովադրի (Պատասխանատու անձի) մոտ գործառնական, ֆինանսական վարձակալությամբ, պահպանման նպատակներով, վստահված ղեկավարման, վարձույթի հիմունքներով, գրավով կամ այլ՝ օրենքով կամ այլ պայմանագրային հիմքով գտնվող գույքի ոչնչացման (վնասման) արդյունքում,
- 3.3.5. ցանկացած տեսքով դրամական միջոցների ոչնչացման (վնասման), կորստի արդյունքում (դրամական միջոցների կորուստ ասելով պետք է հասկանալ դրանց վնասումը, ոչնչացումը, կորուստը),
- 3.3.6. ասբեստի , թունավոր բորբոսասնկի, էլեկտրամագնիսական դաշտի ուժերի, կապարի, համակարգչային վիրուսների ազդեցության արդյունքում, ցանկացած կրիչների (այդ թվում՝ թղթային) վրայից ինֆորմացիայի կորստի արդյունքում,
- 3.3.7. կառուցվածքային տարրերի, սարքավորումների, նյութերի բնական մաշվածության, ինչպես նաև շահագործման նորմատիվային ժամկետներից ավել ժամկետում օգտագործելու արդյունքում, ,
- 3.3.8. Ապահովադրի՝ համապատասխան գործողության համար չլիազորված աշխատակցի գործողությունների արդյունքում,
- 3.3.9. անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքում,

Անհաղթահարելի ուժն արտակարգ պատահար է, որի վրա հասնելը չէր կարող կանխորոշվել և կանխարգելվել պարտավորության կատարման համար պատասխանատու անձի կողմից:

- 3.3.10. Ապահովադրի (Պատասխանատու անձի) կողմից արտադրության նկատմամբ համապատասխան վերահսկողության չպահպանման արդյունքում,

- 3.3.11. իրավասու մարմինների կողմից տուգանքի նշանակման արդյունքում:

3.4. Մեկ պատահարի հետևանքով մի քանի Շահառուներին հասցված վնասը համարվում է մեկ ապահովագրական պատահար:

3.5. Սույն Պայմանների համաձայն իրականացված ապահովագրությունը տարածվում է բացառապես Ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակահատվածում վնաս հասցնելու դեպքերի վրա, անգամ այն դեպքում, երբ վնասը հայտնաբերվել է ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո:

Եթե վնաս պատճառելու դեպքը, որը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում, վրա է հասել կամ գործողության ընթացքում էր մինչ Ապահովագրության պայմանագրի կնքումը, ապահովագրական հատուցումը ենթակա է վճարման միայն այն դեպքում, եթե պայմանագրի կնքման օրվա դրությամբ Ապահովադիրին (Պատասխանատու անձին) ոչինչ հայտնի չէր և չէր կարող հայտնի լինել այն հանգամանքների (պատճառների) մասին, որոնք հանգեցրել են վնասի առաջացմանը:

4. Ապահովագրության պայմանագրի գործողության տարածքը

4.1. Ապահովագրության պայմանագիրը գործում է ՀՀ տարածքում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.2. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրության պայմանագրի գործողության տարածք է հանդիսանում Ապահովագրողի հետ համաձայնեցրած և Ապահովագրության վկայագրում նշված Ապահովադիրի (Պատասխանատու անձի) գտնվելու վայրը (հասցեն)՝ ապահովագրության տարածքը՝, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.3. Եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրում, Ապահովագրության տարածք է հանդիսանում այն տարածքը, որի շրջանակներում Ապահովադիրն իրականացնում է իր հիմնական գործունեությունը կամ իր գործողությունները:

4.4. Ապահովագրության պայմանագիրն ամեն դեպքում չի գործում ԱՄՆ-ի, Կանադայի և Ավստրալիայի տարածքում:

5. Մասնագիտական պատասխանատվության սահմանաչափերը

5.1. Մասնագիտական պատասխանատվության ընդհանուր (ազրեգատային) սահմանաչափ է համարվում Ապահովագրության պայմանագրում սահմանված դրամային գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պարտավոր է կատարել ապահովագրական հատուցումներ Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարներ տեղի ունենալու

դեպքում:

5.2. Մասնագիտական պատասխանատվության սահմանաչափը սահմանվում է կողմերի համաձայնությամբ, ՀՀ դրամով:

5.3. Ապահովագրության պայմանագրի կնքման ընթացքում կարող են նաև սահմանվել՝

ա) մեկ ապահովագրական պատահարի համար վճարվող ապահովագրական հատուցման սահմանային գումարներ (մեկ ապահովագրական պատահարի համար Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն սահմանաչափը)

բ) ապահովագրական հատուցման սահմանային գումարներ (մասնագիտական պատասխանատվության սահմանաչափեր)՝ կապված հատուկ տեսակի վնասների հետ (կյանքին և/կամ առողջությանը, գույքին հասցված վնաս)

գ) ապահովագրական հատուցման սահմանային գումարներ (մասնագիտական պատասխանատվության սահմանաչափեր)՝ կապված տուժած մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ,

դ) ապահովագրական հատուցումների այլ սահմանաչափեր (մասնագիտական պատասխանատվության սահմանաչափեր):

5.4. Ապահովագրական հատուցման վճարումից հետո մասնագիտական պատասխանատվության ընդհանուր սահմանաչափը նվազում է վճարված ապահովագրական հատուցման չափով:

6. Ապահովագրավճար

6.1. Ապահովագրավճարն ապահովագրության պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է:

6.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է՝ ելնելով մասնագիտական պատասխանատվության ընդհանուր սահմանաչափից և ապահովագրական սակագնից:

6.3. Վճարման ենթակա ապահովագրավճարը կլորացվում է մինչև մոտակա ամբողջ թիվը և ենթակա է վճարման ՀՀ դրամով:

6.4. Կողմերի համաձայնությամբ Ապահովագրության պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար, որը կիրառվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:

Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ

վնասը չի գերազանցում ապահովագրության պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

Ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից: Չփոխհատուցվող գումարը սահմանվում է բացարձակ մեծությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ: Եթե ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում մի քանի ապահովագրական պատահար, չհատուցվող գումարը հաշվի է առնվում դրանցից յուրաքանչյուրի դեպքում:

6.5. 12 (տասներկու) ամսից պակաս ժամկետով կնքված ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարը վճարվում է միանվագ ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետի ընթացքում:

6.6. 12 (տասներկու) ամիս ժամկետով կնքված Ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարը կարող է վճարվել միանվագ Ապահովագրության պայմանագրի կնքման պահին կամ տարածամկետ՝ վճարվելով մի քանի փուլով, այդ թվում՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային կտրվածքով:

Երկու փուլով ապահովագրավճարի վճարման դեպքում դրա առաջին մասը՝ ապահովագրավճարի կեսից ոչ պակաս չափով վճարվում է Ապահովագրության պայմանագրի կնքման պահին: Ապահովագրավճարի մնացած մասը վճարվում է Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի կեսը լրանալու օրվանից ոչ ուշ:

Եռամսյակներով ապահովագրավճարի վճարման դեպքում դրա առաջին մասը ապահովագրավճարի 1/4 մասից ոչ պակաս չափով վճարվում է Ապահովագրության պայմանագրի կնքման պահին: Ապահովագրավճարի մնացած մասը վճարվում է հավասար չափերով Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրվանից ոչ ուշ:

Ապահովագրավճարը ամեն ամիս վճարելու դեպքում դրա առաջին մասը՝ ապահովագրավճարի 1/12-ից ոչ պակաս չափով վճարվում է ապահովագրության պայմանագրի կնքման պահին: Ապահովագրավճարի մնացած մասը վճարվում է հավասար չափաբաժիններով ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի յուրաքանչյուր ամսվա վերջին օրվանից ոչ ուշ:

Ապահովագրողի կողմից Ապահովադրի նկատմամբ հատուցման պարտավորություն առաջանալուց հետո Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Պայմանագրով/Վկայագրով

նախատեսված ապահովագրավճարները ենթակա չեն վերադարձման միանվագ վճարման դեպքում և Ապահովագրողի կողմից ենթակա են գանձման ամբողջ ծավալով տարածամկետ վճարման դեպքում;

7. Ապահովագրության պայմանագրի կնքումը, գործողության ժամկետը և դադարումը

7.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է սույն Պայմաններին համապատասխան, որոնք ընդունվում են Ապահովադրի կողմից և կազմում են Ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրին՝ նրա գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա տրված և նրանց կողմից ստորագրված Ապահովագրության պայմանագիրը/Վկայագիրը հանձնելու ճանապարհով:

Եթե Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշվում են Պատասխանատու անձինք, ապա ապահովագրության դիմումի մեջ նշվում է նաև այդ անձանց վերաբերյալ տեղեկատվություն:

Ապահովադրի խնդրանքով և նրա թելադրանքով դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից: Դիմումի մեջ նշված տեղեկատվության ճշմարտացիության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված դիմումը ստորագրում և վավերացնում է Ապահովադիրը:

7.2. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս, ինչպես նաև դրա գործողություն ընթացքում Ապահովագրողն իրավունք ունի անցկացնել Ապահովադրի (Պատասխանատու անձի) գործունեության կամ գործողությունների իրականացման վայրի զննում:

7.3. Ապահովագրության պայմանագրի կնքումից հետո ապահովագրության դիմումը դառնում է դրա անբաժանելի մասը:

7.4. Ապահովագրության պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր ձևով:

7.5. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության պայմանագիրը/Վկայագիրը կորցնելու դեպքում Ապահովագրողը՝ Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա նրան հանձնում է Ապահովագրության պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը, որից հետո կորած Ապահովագրության պայմանագիրը/Վկայագիրը համարվում է անվավեր և դրա հետ կապված ապահովագրական հատուցումներ չեն իրականացվում:

Ապահովագրության պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը ստանալու համար Ապահովադիրն Ապահովագրողին վճարում է Ապահովագրության պայմանագրի/Վկայագրի պատրաստման համար կատարված ծախսերը:

7.6. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է 1 օրից մինչև 12 (տասներկու) ամիս ներառյալ ժամկետով:

7.7. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում`

7.7.1. ապահովագրավճարի կանխիկ վճարման դեպքում` Ապահովագրողի կողմից ամբողջ ապահովագրավճարի կամ դրա մի մասի ստացման օրվանից կամ ստացման օրվան հաջորդող օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում ցանկացած օրվա 00 ժամ 00 րոպեից` Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,

7.7.2. անկանխիկ փոխանցման դեպքում` ամբողջ ապահովագրավճարը կամ դրա մի մասն Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցելու օրվանից կամ փոխանցման օրվան հաջորդող օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում ցանկացած օրվա 00 ժամ 00 րոպեից` Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,

7.7.3. բանկային պլաստիկ քարտերի օգտագործմամբ ապահովագրավճարի վճարման դեպքում` ամբողջ ապահովագրավճարի կամ դրա մի մասի փոխանցման գործարքը կատարելու (որի հաստատումն են հանդիսանում չեկ-քարտը և/կամ այլ փաստաթղթեր, որոնցով հաստատվում է քարտային հաշվից ապահովագրավճարի փոխանցումը) օրվանից կամ փոխանցման գործարքի կատարման օրվան հաջորդող օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում ցանկացած օրվա 00 ժամ 00 րոպեից` Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,

7.7.4. նոր ժամկետով Ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում և նախորդ պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում` նախորդ Ապահովագրության պայմանագրի ավարտման օրվան հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից:

Ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու օրն ու ժամը նշվում է Ապահովագրության պայմանագրում/Վկայագրում:

7.8. Ապահովագրության պայմանագիրը վերջանում է Ապահովագրության պայմանագրում որպես Պայմանագրի գործողության ավարտի օր նշված օրվա տեղական ժամանակով ժամը 24-ին (քսանչորս):

7.9. Ապահովագրության պայմանագիրը դադարում է`

7.9.1. դրա ժամկետը ավարտվելու դեպքում,

7.9.2. Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտականությունները լրիվ ծավալով կատարելու դեպքում (ապահովագրական հատուցումների գումարը հավասար է մասնագիտական պատասխանատվության ընդհանուր սահմանաչափին):

7.9.3. Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում և չափով ապահովագրավճարը չվճարելու դեպքում:

Կողմերի համաձայնությամբ Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել, որ Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում ապահովագրավճարի հերթական մասը չվճարելու դեպքում Ապահովագրության պայմանագիրը շարունակում է գործել նախկին պայմաններով այն դեպքում, երբ առկա է Ապահովադրի կողմից գրավոր պարտավորագիր, ըստ որի նա առկա պարտավորությունը մարելու է վճարման հետաձգման օրվանից սկսած ոչ ուշ, քան 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում ապահովագրավճարը չվճարելու դեպքում Ապահովագրության պայմանագիրը ժամկետից շուտ դադարում է 30-օրյա ժամկետին հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից: Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի հատուցման ենթակա գումարը նվազեցնել չվճարված ապահովագրավճարի չափով:

7.9.4. Ապահովագրողի և Ապահովադրի գրավոր համաձայնությամբ,

7.9.5. կապված այն բանի հետ, որ ապահովագրական պատահարի տեղի ունենալն այլևս հավանական չէ և ապահովագրությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր պատճառով (իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման դեպքում, անհատ ձեռնարկատեր Ապահովադրի գործունեության դադարեցման դեպքում և այլն),

7.9.6. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

7.10. Սույն Պայմանների 7.9.4., 7.9.5. կետերին համապատասխան Ապահովագրության պայմանագրի դադարելու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարը՝ պայմանագրի ավարտին մնացած օրերի համամասնությամբ, եթե տվյալ Պայմանագրով հատուցման վճարում չի իրականացվել կամ վճարման ենթակա չէ:

7.11. Ապահովադիրն իրավունք ունի հրաժարվել Ապահովագրության պայմանագրից ցանկացած պահի, եթե հրաժարվելու պահին այլևս առկա չէ

ապահովագրական պատահար տեղի ունենալու հնարավորությունը սույն Պայմանների 7.9.5. կետի հանգամանքներին համապատասխան:

7.12. Ապահովադրի պահանջով ապահովագրության պայմանագիրը ժամկետից շուտ խզելու դեպքում նա պարտավոր է գրավոր դիմում ներկայացնել ապահովագրության պայմանագրի խզման օրվանից 15 օր առաջ: Խզված ապահովագրության պայմանագրի գծով Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է որպես դադարման օր նշված օրվա 00 ժամ 00 րոպեից:

7.13. Ապահովադրի նախաձեռնությամբ ժամկետից շուտ ապահովագրության պայմանագրի խզման դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$ՎԵԱ = (Ա - Հ - ԳԾ) \times ԳԱՕ / ԳԺՕ,$$

որտեղ՝

ՎԵԱ – վերադարձման ենթակա ապահովագրավճար,

Ա – Ապահովադրի կողմից պայմանագրի գործողության ընթացքում վճարված և վճարման ենթակա ապահովագրավճարներ,

Հ – Ապահովագրողի կողմից մինչև պայմանագրի դադարեցումը վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,

ԳԾ – գործավարման ծախսեր՝ ապահովագրավճարի (Ա) 35%,-ը, սակայն ոչ պակաս, քան՝ 5000 ՀՀ դրամ

ԳԱՕ – ապահովագրության պայմանագրի գործողության ավարտին մնացած օրերի քանակ (փոփոխություն մտցնելու օրվան հաջորդող օրվանից),

ԳԺՕ – ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետն օրերով:

8. Ռիսկի աստիճանի փոփոխության հետևանքները

8.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Պատասխանատու անձը) պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած այն հանգամանքների էական փոփոխության մասին, որոնք հաղորդվել են Ապահովագրողին պայմանագրի կնքման ընթացքում և կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

Էական են համարվում, ամեն դեպքում, այն փոփոխությունները, որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերվել Ապահովագրության պայմանագրում/Վկայագրում և Ապահովադրին փոխանցված Պայմաններում:

8.2. Ապահովագրողը, որը տեղեկացել է ռիսկի աստիճանի մեծացման վրա ազդող հանգամանքների մասին, իրավունք ունի պահանջելու Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում՝ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան:

Լրացուցիչ ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱԼ = (ԱՆ - Ա) \times \text{ԳԱՕ} / \text{ԳԺՕ},$$

որտեղ՝

ԱԼ – լրացուցիչ ապահովագրավճար,

ԱՆ – ապահովագրության պայմանագրում փոփոխություններ կատարելուց հետո նոր ապահովագրավճար,

Ա – Ապահովադրի կողմից պայմանագրի գործողության ընթացքում վճարված և վճարման ենթակա ապահովագրավճարներ,

ԳԱՕ – ապահովագրության պայմանագրի գործողության ավարտին մնացած օրերի քանակ (փոփոխություն մտցնելու օրվան հաջորդող օրվանից),

ԳԺՕ – ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը օրերով:

Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվում է ապահովագրության պայմանագրի մեջ փոփոխություններ մտցնել կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարել, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու խզել ապահովագրության պայմանագիրը:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուն) ռիսկի մեծացման մասին Ապահովագրողին հաղորդելու պարտականությունները չի կատարել, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի խզում և դրա հետևանքով կրած վնասների փոխհատուցում:

Ապահովագրողն իրավունք չունի պահանջել պայմանագրի խզում, եթե ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքները վերացել են:

8.3. Ապահովադիրը, որը տեղեկացրել է ռիսկի աստիճանի փոքրացման վրա ազդող հանգամանքների մասին, իրավունք ունի պահանջելու Ապահովագրողին վերադարձնել ապահովագրական ռիսկի նվազմանը համապատասխան որոշված ապահովագրավճարի մի մասը:

Ապահովագրավճարի՝ վերադարձման ենթակա մասը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՎԱ} = (Ա - ԱՆ) \times \text{ԳԱՕ} / \text{ԳԺՕ},$$

որտեղ՝

ՎԱ – վերադարձման ենթակա ապահովագրավճար,

Ա – Ապահովադրի կողմից պայմանագրի գործողության ընթացքում վճարված և վճարման ենթակա ապահովագրավճարներ,

ԱՆ – Ապահովագրության պայմանագրում փոփոխություններ մտցնելուց հետո նոր ապահովագրավճարի գումարը,

ԳԱՕ – Ապահովագրության պայմանագրի գործողության ավարտին մնացած օրերի քանակ (փոփոխություն մտցնելու օրվան հաջորդող օրվանից),

ԳԺՕ – Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը օրերով:

9. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

9.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

9.1.1. ծանոթանալ սույն Պայմաններին,

9.1.2. ժամկետից շուտ հրաժարվել Ապահովագրության պայմանագրից սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան,

9.1.3. Ապահովագրության պայմանագրի պայմաններում փոփոխություններ կատարելու առաջարկ անել Ապահովագրողին,

9.1.4. Ապահովագրողի մասին տեղեկություններ ստանալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

9.1.5. այն դեպքում, երբ Ապահովագրության պայմանագրով ապահովագրված է Ապահովադրից տարբեր անձի վնաս պատճառելու պատասխանատվության ռիսկը, ցանկացած ժամանակ, սակայն մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը, փոխարինել նրան այլ Պատասխանատու անձով՝ այդ մասին Ապահովագրողին գրավոր դիմելով:

9.1.6. Ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան ստանալ ապահովագրական հատուցում:

9.2. Ապահովադիրը պարտավոր է՝

9.2.1. Ապահովագրության պայմանագրի կնքման ընթացքում Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն հանգամանքների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը և դրա հետևանքով առաջացած հնարավոր վնասների չափը որոշելու համար (ապահովագրական ռիսկ), եթե այդ հանգամանքները հայտնի չեն և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին:

9.2.2. Ժամանակին վճարել ապահովագրավճարն Ապահովագրության պայմանագրով նախատեսված չափերով և կարգով:

9.3. Դեպքի, որը հետագայում կարող է որակվել որպես ապահովագրական պատահար, տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է՝

9.3.1. ձևավորված հանգամանքներում ձեռնարկել խելամիտ և հասանելի միջոցառումներ վնասի նվազեցման համար և այն անձանց կյանքը փրկելու համար, որոնց հասցվել է վնասը: Ձեռնարկելով նման միջոցառումներ՝ Ապահովադիրը պետք է հետևի Ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսիք եղել են,

9.3.2. անհապաղ, սակայն ոչ ուշ, քան դեպքը տեղի ունենալու մասին իրեն հայտնի դառնալուց 24 (քսանչորս) ժամվա ընթացքում այդ մասին տեղեկացնել համապատասխան իրավասու մարմիններին,

9.3.3. 3 աշխատանքային օրում Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ՝ նշելով հնարավոր պատճառները և հանգամանքները, դեպքը տեղի ունենալու ժամանակը, վնասի բնույթը,

9.3.4. հնարավորությունների սահմաններում ապահովել Ապահովագրողի (նրա ներկայացուցչի) մասնակցությունը վնասված գույքի զննման գործընթացում՝ վնասի չափը, պատճառները և այլ հանգամանքները պարզելու նպատակով,

9.3.5. Ապահովագրողին ցուցաբերել հնարավոր աջակցություն դատական և արտադատական պաշտպանության ընթացքում

9.3.6. Այն դեպքում, երբ ներկայացվել է վնասի հատուցման պահանջ՝ կապված ապահովագրական պատահարի կամ ենթադրվող ապահովագրական պատահարի հետ, Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) Ապահովագրության պայմանագիրը/Վկայագիրը,

բ) վնասի հատուցման պահանջի վերաբերյալ դիմում, որը ներկայացվել են Ապահովագրողին՝ կապված տեղի ունեցած դեպքի հետ,

գ) եթե ապահովագրական համարվող պատահարի հետ կապված անց է կացվել անկախ փորձաքննություն՝ փորձաքննող հանձնաժողովի (փորձագետի եզրահանգումը),

դ) եթե ապահովագրական պատահարը կարգավորվում է սույն Պայմանների

9.5.6. կետում նշված դատական կարգով, դատարանի կամ վերաքննիչ դատարանի

որոշումը, որը պարունակում է վնաս հասցնելու հետ կապված հատուցման գումարների չափերը,

ե) եթե ապահովագրական պատահարը կարգավորվում է սույն Պայմանների 9.5.5. կետում նախատեսված արտադատական կարգով, փաստաթղթեր, որոնք հաստատում են հասցված վնասի փաստը, հանգամանքները և չափը, ինչպես նաև թույլ են տալիս հաստատել Ապահովադրի (Պատասխանատու անձի) մասնագիտական պատասխանատվությունը,

զ) այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարը կարգավորելու համար, որոնց վերաբերյալ Ապահովագրողը գրավոր հարցում է կատարել:

9.3.7. անհրաժեշտության դեպքում Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին հանձնել Ապահովադրի (Պատասխանատու անձի) իրավունքների պաշտպանության և դատական կամ վերաքննիչ մարմիններում վնասի կարգավորման գործընթացն իրականացնելու լիազորագիրը:

9.4. սույն Պայմանների և Ապահովագրության պայմանագրի դրույթները հավասարապես վերաբերում են Պատասխանատու անձին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովադիրը պարտավոր է ծանոթացնել Պատասխանատու անձին սույն Պայմանների և Ապահովագրության պայմանագրի հետ: Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Պատասխանատու անձից սույն Պայմաններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարում: Պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում սույն Պայմաններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման համար:

9.5. Ապահովագրողն իրավունք ունի՝

9.5.1. պահանջել անվավեր ճանաչել Ապահովագրության պայմանագիրը, եթե Ապահովագրության պայմանագրի կնքումից հետո բացահայտվի, որ Ապահովադիրն Ապահովագրողին հաղորդել է նախապես կեղծ տեղեկություններ այն հանգամանքների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը և դրա տեղի ունենալու արդյունքում առաջացած հնարավոր վնասների չափը որոշելու համար,:

9.5.2. պահանջել Պատասխանատու անձից Ապահովագրության պայմանագրով Ապահովադրի վրա դրված, սակայն վերջինիս կողմից

չկատարված պարտավորությունների կատարում,

9.5.3. այն դեպքում, երբ Ապահովադիրը կամ Պատասխանատու անձը չի կատարել սույն Պայմանների 8.2. կետում նախատեսված պարտավորությունները, պահանջել Պայմանագրի խզում և Պայմանագրի խզման հետևանքով կրած վնասների հատուցում,

9.5.4. ինքնուրույն պարզել վնասի պատճառները և առաջացման հանգամանքները, հաստատել պատճառված վնասի չափը, ինչպես նաև հարցումներ ուղարկել իրավասու մարմիններին ապահովագրական պատահարի նախանշաններ ունեցող դեպքի փաստը, պատճառը և պատճառված վնասի չափը հաստատող փաստաթղթերի ստացման նպատակով,

Ապահովագրողն իրավունք ունի ներգրավել անկախ փորձագետների՝ սույն Պայմաններում և Ապահովագրության պայմանագրով նախատեսված պատահարների հետևանքով առաջացած վնասի չափը որոշելու նպատակով:

9.5.5. Այն դեպքում, երբ առարկություն չկա, որ պատահարն ապահովագրական է, տուժողը/Ապահովադիրն (Պատասխանատու անձը) իրավունք ունի ստանալ ապահովագրական հատուցում արտադատական կարգով:

Այդ դեպքում վնասի և ապահովագրական հատուցման չափերի որոշումն իրականացվում է Ապահովագրողի կողմից իրավասու մարմիններից ստացված՝ վնասի պատճառման փաստերը, հանգամանքները և հետևանքները հաստատող փաստաթղթերի հիման վրա (բուժ. հաստատություններից, բժշկա-աշխատանքային փորձագիտական խորհրդի կողմից, սոցիալական ապահովության մարմիններից և այլն), ինչպես նաև հաշվի առնելով վնասի չափը հաստատող տեղեկանքները, հաշիվները և այլ փաստաթղթերը:

Ապահովագրողն իրավունք ունի ներգրավել անկախ փորձագետների՝ սույն Պայմաններում և Ապահովագրության պայմանագրով նախատեսված պատահարների հետևանքով առաջացած վնասի չափը որոշելու նպատակով:

9.5.6. Սույն Պայմանների 9.5.5. կետում նախատեսված հանգամանքների շուրջ վեճերի առկայության դեպքում ապահովագրական հատուցումը վճարել դատարանի կամ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի (որոշման) կամ Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ կնքված հաշտության պայմանագրի հիման վրա:

9.6. Ապահովագրողը պարտավոր է՝

- 9.6.1. Ապահովադրին հանձնել Ապահովագրության Պայմանագիրը / Վկայագիրը՝ դրան կցելով ապահովագրության Պայմանները,
- 9.6.2. չտարածել իր մասնագիտական գործունեության ընթացքում Ապահովադրի (Պատասխանատու անձի) մասին իրեն հայտնի դարձած տեղեկությունները, այդ անձանց գույքային վիճակի վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
- 9.6.3. կատարել Ապահովագրության պայմանագրով իր վրա դրված պարտականությունները,
- 9.6.4. վերադարձնել ապահովագրավճարի մի մասը՝
- սույն Պայմանների 7.10. կետի համապատասխան ժամկետից շուտ Ապահովագրության պայմանագրի խզման դեպքում՝ Ապահովագրության պայմանագրի խզման օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
 - Ապահովագրական ռիսկի նվազման դեպքում՝ Ապահովագրության պայմանագրի մեջ փոփոխություններ մտցնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Պատասխանատվության սահմանչափն արտարժույթով սահմանված լինելու դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով, Ապահովագրության պայմանագրի խզման կամ Պայմանագրում փոփոխություն մտցնելու օրվա դրությամբ ապահովագրական գումարի արտարժույթի նկատմամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով:

- 9.6.5. Ապահովագրողի մեղքով ապահովագրավճարն անժամանակ վերադարձնելու դեպքում Ապահովադրին վճարել տույժ վերադարձման ենթակա գումարի 0,1%-ի չափով յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:
- 9.6.6. կազմել ակտ ապահովագրական պատահարի վերաբերյալ սույն Պայմանների և Ապահովագրության պայմանագրի համաձայն ապահովագրական պատահարի փաստը, վնասի չափը և պատճառները հաստատող փաստաթղթերի ստացումից 5 (հինգ) օրվա ընթացքում,
- 9.6.7. ապահովագրական պատահարի վերաբերյալ ակտը կազմելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ապահովագրական հատուցման վճարումը Շահառուին, ինչպես նաև Ապահովադրի կրած դատական ծախսերի հատուցման վճարումը:

9.6.8. ապահովագրական հատուցումն Ապահովագրողի մեղքով ժամանակին չվճարելու դեպքում Շահառուին (Ապահովադրին) վճարել տույժ վճարման ենթակա ապահովագրական հատուցման 0,1% չափով՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:

10. Ապահովագրական հատուցման չափի որոշումը և վճարումը

10.1. Ապահովագրական հատուցում վճարելու համար հիմք է հանդիսանում ապահովագրական պատահարի վերաբերյալ ակտը, որին կցվում են ապահովագրական պատահարը հաստատող փաստաթղթերը:

10.2. Ապահովագրական հատուցման չափը որոշվում է և սահմանափակվում է պատճառված վնասի մեծության չափով, սակայն չի կարող գերազանցել Ապահովագրության պայմանագրում նշված Ապահովագրական գումարը: Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրողի կողմից՝ նվազեցնելով Ապահովագրության պայմանագրում նշված ոչ պայմանական չհատուցվող գումարը (եթե այդպիսին նախատեսված է):

10.3. Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են՝

10.3.1. ֆիզիկական անձի կյանքին և/կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում՝

ա) աշխատավարձը, որից տուժողը զրկվել է աշխատունակության կորստի, հաշմանդամության կամ առողջությանը պատճառված այլ վնասի հետևանքով,

բ) բուժման ծախսերը և լրացուցիչ ծախսերը, որոնք անհրաժեշտ են առողջությունը վերականգնելու համար (անհրաժեշտ սննդակարգի, սանատորիական բուժման, կողմնակի խնամքի, պրոթեզավորման և այլ ծախսեր),

գ) հուղարկավորման ծախսերը,

դ) Ապահովագրողի հետ համաձայնեցրած դատարանում և արբիտրաժային մարմիններում գործի վարման համար անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, ներառյալ իրավաբանների, փորձագետների ծառայությունների ծախսերի վճարումը,

ե) ապահովագրական պատահարի հետևանքով անձանց կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ կապված կամ ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած վնասի նվազեցման համար անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը:

Ծախսերը, որոնք թվարկված են դ) կետում հատուցվում են մասնագիտական պատասխանատվության ընդհանուր սահմանաչափի 10%-ի սահմաններում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.3.2. Այն դեպքում, երբ վնասը հասցվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի գույքին՝

ա) իրական վնասը, որը պատճառվել է գույքի ոչնչացման կամ վնասվածքի հետևանքով, որը որոշվում է՝

➤ **Գույքի լրիվ ոչնչացման դեպքում**՝ ապահովագրական պատահարի օրվա դրությամբ դրա իրական արժեքի չափով՝ նվազեցրած օգտագործման համար պիտանի մնացորդների արժեքի չափով,

➤ **Գույքի մասնակի վնասման դեպքում**՝ այն ծախսերի չափով, որոնք անհրաժեշտ են գույքը մինչև ապահովագրական պատահարը եղած վիճակին բերելու համար,

բ) Ապահովագրողի հետ համաձայնեցրած դատական և արբիտրաժային մարմիններում գործերի վարման համար անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, ներառյալ իրավաբանների, փորձագետների ծառայությունների համար կատարված ծախսերի վճարումը,

գ) այն անձանց, ում ապահովագրական պատահարի հետևանքով վնաս է հասցվել, գույքը փրկելու համար անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը կամ ապահովագրական պատահարի հետևանքով հասցված վնասի նվազեցման ծախսերը,

բ) կետում նշված ծախսերը հատուցվում են մասնագիտական պատասխանատվության ընդհանուր սահմանաչափի 10%-ի չափով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.4. Ապահովագրական հատուցման գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել մասնագիտական պատասխանատվության սահմանաչափը, բացառությամբ Ապահովադրի կողմից վնասի նվազեցման նպատակով կատարված ծախսերի դեպքի:

10.5. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին մասնագիտական պատասխանատվությունն ապահովագրվել է մի քանի ապահովագրական ընկերություններում (կրկնակի ապահովագրություն), ապա ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել պատճառված վնասի չափը: Այդ պարագայում ապահովագրական ընկերություններից յուրաքանչյուրը վճարում է ապահովագրական հատուցում իր կնքած Ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի և բոլոր ապահովագրության պայմանագրերում սահմանված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերության համամասնությամբ:

10.6. Եթե ապահովագրավճարի առաջին և հերթական վճարման միջև ընկած

ժամանակահատվածում (այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագրում սահմանված է ապահովագրավճարի տարածամկետ վճարում) տեղի է ունեցել ապահովագրական պատահար, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցման գումարը նվազեցնել չվճարված ապահովագրավճարի գումարի չափով այն դեպքում, երբ դա սահմանված է կողմերի համաձայնությամբ և նշված է Ապահովագրության պայմանագրում/Վկայագրում:

10.7. Ապահովագրական հատուցումը կարող է վճարվել՝

- Ապահովագրողի կամ Ապահովագրողին սպասարկող բանկի դրամարկղից՝ կանխիկ դրամով,
- այլ անձանց հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով,
- այլ անձանց քարտային հաշվին՝ անկանխիկ փոխանցման ճանապարհով:

10.8. Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում՝

- Կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի կամ Ապահովագրողին սպասարկող բանկի դրամարկղից կանխիկ գումարով վճարման օրը,
- Անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի (նրա ներկայացուցչի) հաշվարկային հաշվից Ապահովադրին (Շահառուին) դրամական միջոցների փոխանցման օրը,
- Բանկային պլաստիկ քարտերի օգտագործմամբ վճարում իրականացնելու դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվից Ապահովադրի (Շահառուի) քարտային հաշվին դրամական միջոցների փոխանցման օրը:

10.9. Այն դեպքում, երբ ապահովագրական հատուցում վճարելուց հետո պարզվի, որ Ապահովադիրն (Շահառուն) իրավունք չուներ ապահովագրական հատուցում ստանալ, նա պարտավոր է վերադարձնել Ապահովագրողին արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցման գումարը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջն ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

10.10. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, երբ Ապահովագրողին և Ապահովադրին (Շահառուին) վնասի կարգավորման ընթացքում չի հաջողվել համաձայնության գալ վնասի և հատուցման չափի վերաբերյալ, կարող է նշանակվել փորձաքննություն: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի գրավոր ձևով պահանջել ապահովագրական պատահարի տեղի ունենալու պատճառները պարզող փորձաքննության անցկացում:

Փորձաքննություն իրականացնելու նպատակով ընտրվում է անկախ փորձագետ՝ համապատասխան փորձաքննությունն անցկացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակից:

Փորձաքննության ծախսերը կրում է նախաձեռնող կողմը: Այն դեպքում, երբ

երկու կողմերն էլ հետաքրքրված են փորձաքննության անցկացման մեջ, դրա իրականացման ծախսերը բաշխվում են կողմերի սահմանած համամասնությամբ:

Ապահովագրողն ապահովագրական հատուցում վճարելու և դրա չափի վերաբերյալ որոշում է կայացնում՝ ելնելով սույն պայմանների և փորձագետի կողմից իրականացված քննության եզրահանգումից:

10.11. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում վճարել, եթե Ապահովադիրը (Պատասխանատու անձը) ապահովագրական պատահարի մասին չի տեղեկացրել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին): Սակայն Ապահովագրողը չի ազատվում ապահովագրական հատուցում իրականացնելու իր պարտավորությունից, եթե ժամանակին տեղեկացել է ապահովագրական պատահարի տեղի ունանալու մասին կամ նման տեղեկության բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտավորության վրա:

11. Վեճերի լուծման կարգը

11.1 Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական հաշտարարի գրասենյակի միջոցով՝ «Ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն: